ԱՄԲԵՐԴ
ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաշխարհային ապրանքային շուկաների զարգացումները և ՀՀ սպառողական գների ինդեքսը

2018թ երկրորդ եռամսյակ

ԵՐԵՎԱՆ 2018

Համաշխարհային ապրանքային շուկաների վերլուծության նպատակը դրանցում շրջանառվող հիմնական ակտիվների գծով առանցքային զարգացումների դիտարկումն է՝ գների միտումների վերլուծությունը և այդ միտումները պայմանավորող հիմնական գործոնների բացահայտումը, ինչպես նաև ՀՀ ապրանքային շուկայի և սպառողական գների վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը: Համաշխարհային շուկաներում գնանշվող ապրանքատեսակներից ուսումնասիրվում են Էներգակիրները (նավթ, բենզին, դիզելային վառելիք), մետաղներից պղինձը, պարենային ապրանքներից նրանք, որոնք էական ազդեցություն ունեն ՀՀ տնտեսական զարգացումների, մասնավորապես՝ տնտեսական ակտիվության և սպառողական գների վրա: Հաշվի առնելով այդ ազդեցությունների լագային բնույթը, միջազգային շուկաների զարգացումները դիտարկվում են ամենաքիչը 2, իսկ հայաստանյան սպառողական գները՝ 1 տարվա կտրվածքով:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ապրանքային շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են համաշխարհային ապրանքային բորսաներում (Chicago Mercantile Exchange, Intercontinental Exchange (ICE), London Metal Exchange և այլն) գնանշումների՝ Investing.com և Thompson Reuters գործակալությունների կողմից հրապարակումները և տեղեկատվական-վերլուծական նյութերը, ՀՀ ԿԲ և ԱՎԾ կողմից ներկայացվող վիճակագրությունը, ՀԲ կողմից հրապարակվող վիճակագրությունը:

Ամփոփագիրը կազմված է 5 մասից, որոնցից առաջին 3-ում նախ ամփոփ ներկայացվում են ապրանքային շուկաների առանցքային զարգացումների ու դրանց դրսևորած ազդցությունների ուղղությունները, ապա առանձին ներգիրում ներկայացվում են այդ շուկաներին բնորոշ զարգացումները և ապա ավելի դետալացված քննարկվում ազդեցությունների բնույթն ու չափը: 4-րդում ներկայացվում է ՀԲ կողմից հրապարակվող միջազգային ապրանքային շուկաների ինդեքսի ու դրա բաղադրիչների, իսկ 5-րդ մասում՝ ՀՀ սպռողական գների ինդեքսը և դրա դինամիկան:

Սույն ամփոփագրում հրապարակված վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են, և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն

Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք
Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

Ամփոփ տեսություն.....4
1.Էներգակիրների շուկա, փոխարժեք և սպառողական գներ.....5
2. Մետաղների շուկա և հանքարդյունաբերություն.....9
3. Պարենային շուկա և սպառողական գներ.....11
4.Միջազգային ապրանքային ինդեքսներ.....16
5.Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում.....18

Ամփոփ տեսություն

2018թ-ի հունվար – 2018թ-ի հունիս ժամանակահատվածում միջազգային ապրանքային շուկաներում տեղի ունեցած զարգացումները ՀՀ տնտեսության ընդհանուր առմամբ ունեցել են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ: Դրական զարգացումներից պետք է առանձնացնել **պղնձի բորսայական գները զգալի աճը, ինչը իր դրական ազդեցությունն է ունեցել ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ հանքարդյունաբերության վրա:** Դրական է եղել նաև **շաքարավազի բորսայական գների նվազումը**, որը, ճիշտ է, մեծ ժամանակային խզմամբ և փոքր չափով, սակայն նպաստել է հայաստանյան շուկայում շաքարի գների նվազմանը:

2016թ-ի հունվար – 2018թ-ի հունիս ժամանակահատվածում **նավթի գները զգալիորեն վերականգվել են**, որը ՀՀ տնտեսության վրա ունեցել է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այսպես, նավթի գների աճը նպաստել է ռուսական ազգային արժույթի՝ դոլարի և դրամի նկատմամբ դիրքերի ամրապնդմանը, ինչը դրական է ազդել ՌԴ-ից ստացվող տրանսֆերտների գնողունակության վրա, ինչպես նաև բարելավել առևտրի պայմանները: Մյուս կողմից սակայն՝ նավթի գների աճը հանգեցրել է **բենզինի և դիզվառելիքի բորսայական գների աճին**, որին կտրուկ արձագանքել են նաև հայաստանյան սպառողական գները:

Պարենային ապրանքների մեծ մասի բորսայական գների փոփոխության նկատմամբ հայաստանյան սպառողական գները անտարբեր են եղել, սակայն բացառություն է **եղել կարագի գների աճը,** որին որոշակի ժամանակային լագով կտրուկ արձագանքել է հայաստանյան շուկան: Հացահատիկի գների Համաշխարհային Բանկի ինդեքսի հետ համեմատած Հայաստանյան շուկայում նույնպես հակառակ միտում է արձանագրել:

1.Էներգակիրների շուկա, փոխարժեք և սպառողական գներ

2016թ-ի հունվար – 2018թ-ի հունիս ժամանակահատվածում նավթի գները զգալիորեն վերականգվել են, որը ՀՀ տնտեսության վրա ունեցել է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այսպես, նավթի գների աճը նպաստել է ռուսական ազգային արժույթի՝ դոլարի և դրամի նկատմամբ դիրքերի ամրապնդմանը, ինչը դրական է ազդել ՌԴ-ից ստացվող տրանսֆերտների գնողունակության վրա, ինչպես նաև բարելավել առևտրի պայմանները: Մյուս կողմից սակայն՝ նավթի գների աճը հանգեցրել է բենզինի և դիզվառելիքի բորսայական գների աճին, որին կտրուկ արձագանքել են նաև հայաստանյան սպառողական գները:

Միջազգային անդրադարձ 1

Էներգակիրների միջազգային գները 2016-2018թ 2-րդ եռ.

Նավթի գները դիտարկվող ժամանակահատվածում՝ 2016թ-ի հունվարից սկսած, դրսևորվել են վերականգնման ընդհանուր միտում: Brent տեսակի նավթի գներն այս ընթացքում աճել են ավելի քան կրկնակի՝ 2018թ-ի մարտի վերջին գերազանցելով 1 բարելի դիմաց 70$-ի սահմանագիծը, իսկ հունիսին մոտեցել 80 դոլարի մակարդակին:



Աղբյուր՝ Investing.com

Նավթի գների այսպիսի վերականգնումը 2014-2015թթ անկումից հետո տեղի է ունեցել հիմնականում ՕՊԵԿ-ի կողմից առաջարկի նվազեցման և սառեցման ռազմավարության շնորհիվ, որը, որոշ շեղումներով, ***հասել է նպատակադրված արդյունքին:*** Կարտելը, Ռուսաստանը և Իրաքը համատեղ համաձայնության էին եկել նավթի օրական առաջարկը կրճատել 1.2 մլն բարելով, և թիրախավորել էին ***60$ 1 բարելի դիմաց գինը,*** սակայն ԱՄՆ կողմից թերթաքարային նավթի արդյունահանման ծավալների դանդաղ վերականգնումը, համաշխարհային տնտեսության և նավթի նկատմամբ պահանջարկի արագ վերականգնումը և դրական սպասումները գները 2018թ-ի սկզբից վեր հրեցին նաև 70$-ի սահմանագծից: 2018թ-ւ երկրորդ եռամսյակում նավթի գների աճը շարունակվեց՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրավիճակով և առաջարկի ընդլայնման ավելի թույլ տեմպերով քան սպասվում էր:

Բենզինի և դիզվառելիքի գներն աճել են նավթի վերականգնմանը զուգընթաց՝ 2016թ-ի հունվարի նկատմամբ համապատասխանաբար 84 և 131 տոկոսներով:





Աղբյուր՝ Investing.com

2016-2018թ հունիսին տեղի ունեցած նավթի գնի վերականգնումը օգնել է զգալիորեն վերականգնվել ռուսական ռուբլուն՝ ինչպես ԱՄՆ դոլարի, այնպես էլ ՀՀ դրամի նկատմամբ: Ռուբլի դոլարի և դրամի նկատմամբ 2016թ-ի հունվարի համեմատ համապատասխանաբար աճել է 32 և 36 տոկոսով, ընդ որում՝ փոխարժեքները բարձր կոռելացված են եղել նավթի գնի հետ(մոտ 80%): Հստակ նկատելի է սակայն, որ ռուսական արժույթը քիչ է արձագանքել նավթին 2017 և 2018թթ ընթացքում, որի հիմնական պատճառը ՌԴ նկատմամբ արևմուտի սանկցիաներն են, ՌԴ-զարգացած

շուկաներ տոկոսադրույքի դիֆերենցիալի «նեղացումը» և ՖՆ կողմից ռեզերվների կուտակման նպատակով արտարժույթի գնումները շուկայից(ներկայումս՝ մոտ $200 մլն օրական):

Գծանկար 1 Բրենթ տեսակի նավթի գնի, ռուբլի/դոլար և ռուբլի/դրամ փոխարժեքների ինդեքսները(2016թ հունվար =100)



Աղբյուրը՝ Investing.com և հեղինակի հաշվարկներ

Միջազգային շուկաներում էներգակիների գների աճը իր արտացոլումն է գտել նաև հայաստանյան սպառողական շուկայում: 2016թ-ի դեկտեմբերի նկատմամբ բենզինը գները Հայաստանում աճել են 29.4, իսկ դիզելային վառելիքինը՝ 43.3 տոկոսով:

Վառելիքի գների նման աճը պայմանավորված է եղել ինչպես հարկման համակարգի փոփոխությամբ, այլ նաև համաշխարհային շուկաներում էներգետիկ ռեսուրսների գնային շարժերով:

Գծանկար 2 Բենզինի և դիզելային վառելիքի գների ինդեքս(2016թ դեկտեմբերը =100)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ

2. Մետաղների շուկա և հանքարդյունաբերություն

2016թ-ի հունվար – 2018թ-ի հունիս ժամանակահատվածում պղնձի բորսայական գները զգալիորեն աճել են, ինչը իր դրական ազդեցությունն է ունեցել ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ հանքարդյունաբերության վրա:

Միջազգային անդրադարձ 2

Պղնձի միջազգային գները 2016թ-2018թ մարտ

Պղնձի բորսայական գները 2016թ-ի հունվարից գտնվել են աճի տրենդում՝ ավելանալով մոտ 43 տոկոսով:



Աղբյուր՝ Investing.com

Պղնձի գների այսպիսի աճը պայմանավորված է մի կողմից առաջարկի գործոններով, մասնավորապես՝ Չինաստանում և Ինդոնեզիայում արտադրության ընդհատումներով, մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսության վերկանգնմանը զուգահեռ պահանջարկի աստիճանական աճով:

Պղնձի միջազգային գների աճը հանգեցրել է ՀՀ-ից պղնձի խտանյութի արտահանման գնի ավելացման: 2016թ-ի հունվարին պղնձի խտանյութի 1 տոննայի արտահանման գինը Հայաստանից, ըստ մեր հաշվարկների, կազմել է 835 դոլար, երբ Լոնդոնի բորսայում պղնձի 1 տոննայի դիմաց գինը կազմել է 4550 դոլար: 2018թ-ի

հունիսին արտահանման գինը կազմել է 1468 դոլար, երբ բորսայական միջազգային գինը կազմել է 6500 դոլար:

Գծանկար 4 Պղնձի բորսայական միջազգային գնի և պղնձի խտանյութի արտահանման գնի դինամիկան դինամիկան, դոլար



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Investing.com և հեղինակի հաշվարկներ

3. Պարենային շուկա և սպառողական գներ

2016թ-2018թ հունիսն ընդգրկող ժամանակաշրջանում պարենային ապրանքների մեծ մասի բորսայական գների փոփոխության նկատմամբ հայաստանյան սպառողական գները անտարբեր են եղել, սակայն բացառություն է եղել կարագի գների աճը, որին որոշակի ժամանակային լագով կտրուկ արձագանքել է հայաստանյան շուկան: Պետք է առանձնացնել շաքարավազի բորսայական գների նվազումը, որը, ճիշտ է, մեծ ժամանակային խզմամբ և փոքր չափով, սակայն նպաստել է հայաստանյան շուկայում շաքարի գների նվազմանը:

Միջազգային անդրադարձ 3

Պարենային ապրանքների միջազգային գները 2016թ-2018թ հունիսին

Դիտարկվող ժամանակահատվածում միջազգային պարենային շուկայում ուշագրավ էր կարագի գնի դինամիկան, որը կտրուկ աճ գրանցեց 2016թ-ի վերջերից սկսած՝ աճելով 3.8 տոկոսով:
Շաքարավազի գինը նվազման ընդհանուր միտում է արձանագրել 2016թ-ի սեպտեմբերից՝ դիտարկվող ժամանակահատվածում նվազելով մոտ 10 տոկոսով:





Աղբյուր՝ Chicago Mercantile Exchange և Investing.com

Մսամթերքի բորսայական գները տարբեր միտումներ են ունեցել՝ ըստ ակտիվների, սակայն բոլորին էլ բնորոշ է եղել ամբողջ ժամանակահատվածի համար հստակ տրենդի բացակայությունը: Տավարի մսի գները նվազել են 21 տոկոսով, իսկ տավարի մսի գներն աճել 26 տոկոսով:





Աղբյուր՝ Investing.com

Կաթնամթերքի բորսայական գները ևս չկոռելացված, հաճախ հակասական դինամիկա են ունեցել: Կարագի և պանրի գները դիտարկվող ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 3.8 և 5.8 տոկոսով, իսկ պանրի գներն ընկել 6.9 տոկոսով: Սակայն առանձին ժամանակահատվածներում գները մեծ տատանումներ են ունեցել՝ հատկապես կաթի և կարագի դեպքում:





Աղբյուր՝ Chicago Mercantile Exchange

Հացահատիկի բորսայական գները ևս անորոշ, հակասական միտումներ են ցուցաբերել դիտարկվող ժամանակահատվածում: Ցորենի գները նվազել են 5.8, իսկ եգիպտացորենինն աճել 4.7 տոկոսով:





Աղբյուր՝ Investing.com

Դիտարկվող ժամանակահատվածում կարագի գները հայաստանյան սպառողական շուկայում աճել են 41.8 տոկոսով, ինչն ակնհայտորեն միջազգային շուկայում 2016թ-ի վերջին սկսված և մինչև 2017թ-ի կեսեր տեղի ունեցած բորսայական գների մոտ 45 տոկոսով աճի արձագանքն էր: Սակայն 2017թ-ի օգոստոսից կարագի բորսայական գները նվազել են մոտ 17 տոկոսով, իսկ հայաստանյան սպառողական շուկայում այն իր արտացոլումը չի գտել:

Գծանկար 5. Կարագի և շաքարի գների ինդեքսներ(2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ

Տավարի մսի գինը հայաստանյան սպառողական շուկայում 2016թ-ի դեկտեմբերի նկատմամբ 2018թ-ի մարտի դրությամբ գինն աճել է 25.2 տոկոսով: Աճն, ըստ էության, պայմանավորված է ներքին գործոններով: Խոզի մսի սպառողական գները աճել են 32.5 տոկոսով, ինչը կոռելացված չի եղել միջազգային շուկայի զարգացումների հետ, և կրկին՝ պայմանավորված է ներքին գործոններով:

Գծանկար 61 Տավարի և խոզի մսի գների ինդեքս(2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ

Կաթի գները դիտարկվող ժամանակահատվածում անկում են ապրել, սակայն 2017թ-ի երկրորդ կեսից սկսել են վերականգնվել, և ի վերջո վերադարձել են գործնականում նույն մակարդակին: Պանրի գները հայաստանյան սպառողական շուկայում դիտարկվող ժամանակահատվածում աճել են 8.6 տոկոսով, ընդ որում՝ գնի աճը տեղի է ունեցել տարվա երկրորդ կեսում, երբ միջազգային գները նվազում էին:

Գծանկար 7 Կաթնամթերքի գների ինդեքսներ(2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ

4.Միջազգային ապրանքային ինդեքսներ

Համաշխարհային բանկի կողմից ցածր և միջին եկամտով երկրների համար պարբերաբար հաշվարկվող ապրանքային գների ինդեքսը 2018թ երկրորդ եռամսյակի ընթացքում նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրել: Ինդեքսների վարքագիծը հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային ապրանքային շուկաներում գնային փոփոխություններով: Էներգետիկ ապրանքների գնային ինդեքսը 2017թ դեկտեմբերից հետո կտրուկ աճել է, սակայն փետրվար ամսից սկսած աճը մեղմվել է 5 տոկոսային կետով: Սակայն Մարտից հետո՝ և ապրիլին և մայիսին այն կրկին աճեց մոտ 5 տոկոսային կետով, հունիսին աճը դանդաղեց: Ոչ էներգետիկ ապրանքների դեպքում նույնպես 2017թ դեկտեմբերից հետո մոտ 2,9 տոկոսային կետով աճ է եղել, ինչը հունիս ամսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 3,77: Նշենք, որ հունիսին մայիսի համեմատ 1,61 տոկոսայային կետով անկում է գրանցվել:

Գծանկար 72 Համաշխարհային Բանկի կողմից հաշվարկվող էներգետիկ և ոչ էներգետիկ ապրանքների ինդեքսների դեինամիկան (2010թ=100)



Աղբյուր՝ ՀԲ

Գյուղատնտեսական ապրանքների դեպքում աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ 2018թ մարտին մոտ 5 տոկոսային կետի էր հասել, սակայն հունիսին մարտից հետո շարունակվող աճը կանգ է առել և մայիսի համեմատ գները ընկել են մոտ 2,6 տոկոսային կետով, ինչի արդյունքում դեկտեմբերի նկատմամբ աճը հունիսին կազմել է 4,2 տոկոս: Նշենք որ ոչ էներգետիկ ապրանքների ինդեքսում գյուղատնտեսական ապրանքները 64,9 տոկոսային կշիռ ունեն: Գյուղատնտեսական մթերքների ինդեքսի կազմում 40 տոկոս կշիռ ունեցող մթերքների ինդեքսը 2017թ դեկտեմբերից հետո աճի միտում է սկսել: Արդյունքում աճը մինչև 2018թ մարտ ամիսը հասել էր 5,28 տոկոսային կետի(տե՛ս Հավելված): Մարտից հետո ապրիլին գրանցված մոտ 2,5 տոկս աճից հետո միտումը դանդաղել է, իսկ հունիսին մարտի նկատմամբ 0,45 տոկոսային կետով անկում է գրանցվել:

5.Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 2017թ-ից հետո 2,8 տոկոս աճ է արձանագրել, ինչից հետո փետրվարին 0,5 տոկոս անկումից հետո մարտ ամսին փետրվարի նկատմամբ կրկին աճել է մոտ 0,1 տոկոսով: Մարտից հետո գների անկման տրենդ է սկսվել՝ մարտի նկատմամբ ապրիլին նվազել է 0,3 տոկոսային կետով, մայիսին՝ 1,4 տոկոսային կետով, իսկ հունիսին 3 տոկոսային կետով:

Գծանկար 8 Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում (2016թ=100)



2018թ հունվարին նախորդ տարվա վերջի համեմատ դիզելային վառելիքի գները 16,3 տոկոս աճ են արձանագրել, ինչից հետո աճի միտումն ավելի դանդաղ է եղել՝ փետրվարին հունվարի նկատմամբ աճը կազմել է 3,4 տոկոս, իսկ մարտին 0,1 տոկոս փետրվարի նկատմամբ: Ապրիլ և մայիս ամիսներին գները ըստ էության չեն փոխվել, իսկ հունիսին մայիսի նկատմամբ 0,2 տոկոսային կետով աճել են: Բենզինի գները հունվարին դեկտեմբերի նկատմամբ աճել են 5,4 տոկոսով, ինչից հետո փետրվերին կրկին 3,6 տոկոս աճից հետո մարտ ամսին աճը փետրվարի նկատմամբ 0,1 տոկոս է եղել: Մարտից հետո գնային փոփխություն ըստ էության չի եղել: Հունվարին վառելիքի գների նման աճը պայմանավորված է եղել ոչ միայն հարկման համակարգի փոփխությամբ, այլ նաև համաշխարհային շուկաներում էներգետիկ ռեսուրսների գնային շարժերով:

Գծանկար 9 Հայաստանյան և միջազգային ապրանքային գների փոփխության կորելացիոն կապը 2017թ հունվարից 2018թ հունիս ամիսների համար



Դիտարկված ապրանքային խմբերի միջազգային և հայաստանյան շուկաներում փոփխությունների կորելացիոն կապերը հետաքրքիր դրսևորում են ունեցել: Ամենամեծ կապը արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի դեպքում՝ համապատասխանաբար 0,85 և 0,84: Խոզի և տավարի մսի դեպքում բացասական կորելացիոն կապ է դիտարկվել: Շաքարի դեպքում կորելացիայի գործակիցը 0,61 է կազմել: Ալյուրի և այլ հացահատիկի դեպքում -0,87 բացասական կորելացիոն կապ է դրսևորվել համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող հացահատիկային ապրանքների ինդեքսի հետ:

Հավելված

Համաշխարհային Բանկի ապրանքային գների ինդեքսը ցածր և միջին եկամտով երկրների (2010թ=100)

	Էներգետիկ ապրանքներ	Ոչ էներգետիկ ապրանքներ													Թանկարժեք մետաղներ
			Գյուղատնտեսական ապրանքներ									Պարարտանյութ	Մետաղներ և հանքանյութեր		
				Խմիչքներ	Մթերք				Հում					Հիմնական մետաղներ (օրինակ երկաթի հանքաքար)	
						Ձեթ և սնունդ	Հացահատիկ	Այլ մթերքներ		Փայտանյութ	Այլ հումքային ռեսուրսներ				
2016M12	68.38	82.87	87.92	87.08	90.71	94.16	74.70	100.66	81.58	82.84	80.20	73.82	73.54	77.88	90.82
2017M01	68.89	84.76	90.15	88.28	93.24	96.23	77.89	103.21	83.61	82.24	85.11	77.25	74.54	79.06	93.58
2017M02	69.41	85.84	90.08	85.01	93.07	94.48	78.11	104.77	85.36	83.42	87.49	79.03	77.94	81.80	97.29
2017M03	65.32	84.45	88.26	84.35	91.25	90.19	77.40	105.18	82.99	82.68	83.33	78.33	77.34	81.35	96.74
2017M04	67.11	82.33	86.90	82.96	89.43	86.38	78.80	103.07	82.74	84.69	80.61	72.83	74.04	80.06	99.37
2017M05	64.34	82.53	88.35	82.32	92.08	88.34	83.42	104.84	82.35	85.77	78.60	68.16	72.24	79.08	96.77
2017M06	60.43	81.55	87.05	81.87	91.37	85.22	86.60	103.79	79.17	85.37	72.39	68.79	71.71	79.22	97.85
2017M07	62.26	83.04	87.57	83.18	91.77	87.17	85.43	103.57	79.59	86.02	72.56	68.54	75.39	82.12	95.61
2017M08	65.02	83.57	85.30	82.97	88.14	86.11	78.49	99.55	79.60	86.41	72.15	69.90	81.56	88.39	99.40
2017M09	68.50	84.77	86.33	82.16	89.59	88.84	79.61	99.62	80.50	87.97	72.34	75.07	82.68	90.50	101.81
2017M10	70.76	84.61	85.59	82.39	89.08	88.92	79.08	98.34	78.74	87.01	69.69	77.75	83.39	92.95	99.06
2017M11	76.25	84.92	85.96	81.40	89.86	89.13	80.33	99.44	78.82	87.12	69.74	78.98	83.46	92.62	99.28
2017M12	77.83	84.53	85.38	77.17	89.12	88.19	81.40	97.33	80.45	88.02	72.18	72.99	84.11	92.15	97.35
2018M01	85.47	87.41	87.53	77.87	91.49	89.36	86.09	99.20	82.79	90.37	74.50	75.23	88.57	96.99	102.67
2018M02	80.51	88.38	88.92	78.75	93.41	92.02	86.86	101.16	83.19	91.90	73.67	76.51	88.61	96.86	102.11
2018M03	80.97	88.07	90.37	81.93	94.40	94.39	89.11	99.18	84.87	92.22	76.85	78.30	84.47	92.90	101.56
2018M04	86.34	89.58	91.71	84.36	96.18	94.85	93.65	100.21	84.61	92.42	76.08	78.59	86.45	96.06	102.30
2018M05	91.64	89.53	91.54	85.46	96.29	91.70	94.41	104.03	83.08	89.01	76.58	77.40	86.79	96.43	100.13
2018M06	90.87	87.92	88.93	81.19	93.33	86.65	90.48	104.71	82.17	88.01	75.79	78.02	86.98	96.83	98.74